Գործ թիվ ԵԴ/58080/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.11.2022թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ. Ստեփանյանս, ծանոթանալով <<ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ն 09.11.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատվիրատուի պատճառաբանված որոշում ընդունելու և հայցվորին տրամադրելու անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք <<ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ 05.11.2022թ. որոշումը վերացնելու պահանջի մասին:

14.11.2022թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

<<ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատվիրատուի պատճառաբանված որոշում ընդունելու և հայցվորին տրամադրելու անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք <<ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ 05.11.2022թ. որոշումը վերացնելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ